# ՀՀ ԱՌԵՎՏՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 2010-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

**Մովսիսյան Մ.Է., Մարտիրոսյան Մ.Հ.***

**Ամփոփում:** Հոդվածում քննարկվում են Հայաստանի Հանրապետության առևտրաշրջանառության ծավալները և նրա զբաղեցրած դիրքը միջազգային շուկայում ըստ տարբեր ապրանքային խմբերի ներմուծման և արտահանման ծավալների 2010-2019թթ.-երի ընթացքում: Ուսումնասիրվել է արտաքին առևտրաշրջանառության արդյունավետության վերլուծություն, արտահանման և ներմուծման ծավալների ինչպես միմյանց միջև, այնպես էլ ՀՆԱ ծավալի հետ համեմատում և դրանց միջև գործող օրինաչափությունների և կապի բացահայտում: Արտաքին առևտրաշրջանառության վերլուծության ավելի կատարյալ մեթոդների մշակմանն ուղղված խնդիրը մեկն է այն խնդիրներից, որոնց լուծումը կնպաստի դրա արդյունավետ զարգացմանը: Հետևաբար, առաջին խնդիրը, որը պետք է լուծել պետության արտաքին առևտրային կապերի վերլուծության ժամանակ, այն է՝ որոշել դրա անցկացման հիմնական ուղղություններն ու փուլերը:

**Բանալի բառեր.** առևտրաշրջանառություն, արտահանում, ներմուծում, տնտեսական ակտիվություն ցուցանիշներ, ապրանքային խմբեր:

**JEL Classification:** J23, O18, R23, O11.

## 1. Ներածություն

Արտաքին առևտրաշրջանառությունը հսկայական նշանակություն ունի ազգային տնտեսական համակարգի զարգացման համար: Արտաքին առևտրի զարգացման հիմնական դրական կողմերից են հանդիսանում. թույլ է տալիս կարգավորել ազգային ռեսուրսների պակասը և ընդլայնել արտաքին շուկաները, թույլ է տալիս կառուցել

* Մանուկ Էդվարդի Մովսիսյան — ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ, հեռ. +374 10 593455, e-mail: m.movsisyan76@mail.ru Գևորգ Հովիկի Մարտիրոսյան — ՀՊՏՀ հաշվապահական հաշվառում և աուդիտ ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող, հեռ. +374 93 903814, e-mail: gevorg.martirosyan.2015@list.ru

արտադրական գործընթաց ազգային տնտեսության հիման վրա, զարգացնել զանգվածային արտադրությունը, բարձրացնել սարքավորումների և արտադրական հզորությունների բեռնման աստիճանը առկա, թույլ է տալիս բարձրացնել նոր տեխնոլոգիաների և տեխնիկայի ներդրման հնարավորությունները, ընդլայնում է ինդուստրացման հնարավորությունները, նպաստում է տնտեսական աճի տեմպերով և բնակչության զբաղվածության բարձրացմանը, բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը և եկամուտների աճը, բարձրացնում է երկրի մասնագիտացումը և միջազգային կապերին նրա ինտեգրման աստիճանը:

Արտաքին առևտրաշրջանառության վերլուծությունն արդիական է դրա կառուցվածքի կատարելագործման առավել հեռանկարային ուղղությունների առանձնացման տեսանկյունից՝ ինչպես ապրանքային, այնպես էլ աշխարհագրական: Հայաստանի Հանրապետության համար արտաքին առևտուրը պետական բյուջեի եկամուտների հիմնական հոդվածն է, և կարիք ունի բարեփոխման՝ հումքային ուղղվածությունից շեղվելու նպատակով, արտաքին առևտրաշրջանառության վերլուծությունն առանցքային նշանակություն ունի արդի ժամանակաշրջանում:

## 2. Հետազոտության մեթոդաբանություն

Արտաքին առևտրաշրջանառության վերլուծության ավելի կատարյալ մեթոդների մշակմանն ուղղված խնդիրը մեկն է այն խնդիրներից, որոնց լուծումը կնպաստի դրա արդյունավետ զարգացմանը: Հետևաբար, առաջին խնդիրը, որը պետք է լուծել պետության արտաքին առևտրային կապերի վերլուծության ժամանակ, այն է՝ որոշել դրա անցկացման հիմնական ուղղություններն ու փուլերը: Ամփոփելով գրականության մեջ առկա մեթոդաբանությունները՝ կարելի է պարզել, որ դրանք բոլորն էլ հիմնականում ներառում են գնահատումը.

1. ընդհանուր առմամբ երկրի արտաքին առևտրային կապերի, դրա առանձին բաղադրիչների (արտահանում, ներմուծում), դրանց դինամիկայի, ամփոփիչ արդյունքի վրա գործոնների ազդեցության (մատակարարման ֆիզիկական ծավալի, արտաքին առևտրային գործարքների գների, ազգային արժույթի փոխարժեքի, աշխարհագրական և տեսականու վրա),
2. արտաքին առևտրային կապերի կառույցները, այդ թվում՝ աշխարհագրական, տեսականու, կառուցվածքային տեղաշարժերը և արտահանման մասնագիտացման երկրի,

3. արտաքին առևտրաշրջանառության, արտահանման և ներմուծման ազդեցություններն ազգային տնտեսության վրա,
4. ազգային արտաքին առևտրային համակարգի դերը համաշխարհային տնտեսության և միջազգային առևտրի մեջ (Сельцовский, 2004):

Մեր կարծիքով՝ թվարկած փուլերին պետք է ավելացնել ևս մեկը՝ մակրոմակարդակում արտաքին առևտրի արդյունավետության վերլուծությունը: Այսպիսով, կստացվի վերլուծական ընթացակարգերի անցկացման ամբողջական և տրամաբանական հաջորդականությունը, ինչը կնպաստի ավելի ամբողջական և օբյեկտիվ հետազոտության իրականացմանը:

Առաջին չորս փուլերը մեթոդական առումով բարդություն չեն ներկայացնում. բոլոր ցուցանիշները վաղուց հայտնի են և լայնորեն օգտագործվում են: Ուստի կանգ առնենք արտաքին առտրաշրջանառության արդյունավետության վերլուծության վրա, քանի որ դրա կատարելագործումը հատկապես արդիական է:

Ցուցանիշների համակարգը և «արտաքին առևտրի արդյունավետություն» հասկացությունը հայրենական և արտասահմանյան գրականության մեջ լայնորեն մեկնաբանվում են նաև տարբեր առումներով: Ինչպես հայտնի է, արդյունավետությունը տնտեսական կատեգորիա է, որի էությունը գործունեության արդյունքների համադրումն է, առաջին հերթին արտադրական և տնտեսական, և դրա շարունակական վերսկսման համար անհրաժեշտ տարբեր գործոնների ծախսերը: Տնտեսական վերլուծության մեջ օգտագործվում են արդյունավետության երկու տեսակ՝ բացարձակ և հարաբերական: Ցանկացած տնտեսական գործունեություն(այդ թվում՝ արտաքին առևտուր) տնտեսապես շահավետ կլինի, եթե արդյունքի ցուցանիշները դրական նշանակություն են ստանում, իսկ արդյունավետությունը՝ 1–ից բարձր: Մակրոմակարդակում, մեր կարծիքով, պետք է գնահատել արտաքին առևտրային հարաբերությունների արդյունավետությունը՝ ելնելով երկու նախադրյալներից՝

1. արտաքին առևտուրը բացի տնտեսական, ունի նաև ծանրակշիռ սոցիալական նշանակություն ցանկացած պետության համար (առավել ևս Հայաստանի համար),
2. ազդեցության առաջացման ոլորտ է հանդես գալիս ֆիրմաների և ազգային տնտեսությունների ներքին միջավայրը, իսկ ստացված արդյունավետության դրսևորման ոլորտն արտաքին տնտեսական միջավայրն է:

Միջազգային առևտրի վերլուծության շրջանակներում առանձնացնում է վերջինիս արժեքային և ֆիզիկական ծավալները: Արժեքային ծավալի հաշվարկն իրականացվում է ժամանակի որոշակի պահի

դրությամբ համապատասխան տարիների գներով՝ օգտագործելով ընթացիկ փոխարժեքները (Дралин, Михнева, 2013, с.89): Բացի արտաքին առևտրի արժեքային ցուցանիշներից և արտաքին առևտրի սալդոն, որոնք որոշվում են առանձին վերցրած երկրի մակարդակով, միջազգային առևտրի համաշխարհային վիճակագրության մեջ հաշվարկվում են միջազգային առևտրի սալդոն և շրջանառությունը (Гоголева, 2013, с.98):

**3. ՀՀ առևտրաշրջանառության վերլուծությունը**

Ազգային տնտեսության վրա համաշխարհային տնտեսության ազդեցության տեսանկյունից տարբերում են ներմուծման և արտահանման կողմնորոշում ունեցող տնտեսական աճի տեսակներ: Ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման ծավալներն անմիջական կապ ունեն ՀՆԱ-ի մեծության հետ: Արտահանման ծավալի աճը ենթադրում է արտահանող երկրի ՀՆԱ-ի մեծացում, և ընդհակառակը, ներմուծման աճը նվազեցնում է ՀՆԱ-ն՝ հակասական ազդեցություն ունենալով երկրի տնտեսության վրա: Տնտեսության իրական վիճակի մասին պատկերացում կարելի է կազմել ծանոթանալով հատկապես արտաքին առևտրաշրջանառությանը, դրա կառուցվածքին ու արտահանման-ներմուծման հարաբերակցությանը: Սա կարող է լինել երկրի տնտեսության հայելային արտապատկերը, իրավիճակի կարևորագույն ցուցիչներից մեկը:

Հայաստանի Հանրապետության ներմուծման մասնաբաժինը 2010-2019թթ.-երի ընթացքում ՀՆԱ-ի մեջ տատանվել է 31%-ից մինչև 40.5%-ի միջակայքում, իսկ արտահանման մասնաբաժինը 11.2%-ից 19.4%-ի միջակայքում, դրանց տարբերության արդյունքում զուտ արտահանում բաղադրիչը նվազեցրել է ՀՆԱ-ի մեծությունը 19.8%-ից մինչև 21.1%: Ուսումնասիրվող ժամանակահատվածում Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության բաղադրիչների և ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշների մակարդակներն արձանագրել են անկման միտումներ (տես գծապատկեր 1):

*Աղյուսակ 1. ՀՀ արտահանման և ներմուծման կառուցվածքն և դինամիկան ըստ երկրների (մլն. դոլար)*

| Երկրներ | 2010 | | 2015 | | 2016 | | 2017 | | 2018 | | 2019 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Արտ. | Ներմ. | Արտ. | Ներմ. | Արտ. | Ներմ. | Արտ. | Ներմ. | Արտ. | Ներմ. | Արտ. | Ներմ. |
| **ԱՊՀ երկրներ, որից** | 198.8 | 1142.2 | 286.4 | 1096.9 | 412.9 | 1120.7 | 595.1 | 1347.8 | 719 | 1492.9 | 808.7 | 1707.7 |
| % | 19.1 | 30.5 | 19.3 | 33.9 | 23.0 | 34.2 | 26.6 | 32.9 | 29.8 | 30.0 | 30.5 | 30.8 |
| **Ռուսաստան** | 160.5 | 835.3 | 224.9 | 942.4 | 374.5 | 983.8 | 557.3 | 1173.2 | 665.8 | 1260 | 742.7 | 1490 |
| % | 9.6 | 2.7 | 6.7 | 3.1 | 5.6 | 3.1 | 4.5 | 2.4 | 4.1 | 2.0 | 3.8 | 1.8 |
| **Ուկրաինա** | 12.1 | 229.9 | 6.2 | 124.6 | 8 | 101.2 | 10.2 | 115.5 | 18.3 | 153.6 | 2.7 | 3.3 |
| % | 6.1 | 20.1 | 2.2 | 11.4 | 1.9 | 9.0 | 1.7 | 8.6 | 2.5 | 10.3 | 0.3 | 0.2 |
| **Բելառուս** | 4.6 | 31.9 | 6.8 | 25.7 | 13.4 | 23.3 | 7.1 | 39.1 | 11.9 | 38.6 | 17.9 | 49.9 |
| % | 2.3 | 2.8 | 2.4 | 2.3 | 3.2 | 2.1 | 1.2 | 2.9 | 1.7 | 2.6 | 2.2 | 2.9 |
| **Ղազախստան** | 3.1 | 11.9 | 4.2 | 0.4 | 5 | 0.7 | 4.9 | 4 | 9.8 | 3.4 | 5.4 | 2.9 |
| % | 1.6 | 1.0 | 1.5 | 0.0 | 1.2 | 0.1 | 0.8 | 0.3 | 1.4 | 0.2 | 0.7 | 0.2 |
| **ԵՄ երկրներ** | 501.1 | 1026.9 | 413.2 | 780.3 | 478.8 | 739.3 | 633.8 | 903.8 | 683.4 | 1155.3 | 583.2 | 1153 |
| % | 48.1 | 27.4 | 27.8 | 24.1 | 26.7 | 22.6 | 28.3 | 22.1 | 28.3 | 23.2 | 22.0 | 20.8 |
| **Այլ երկրներ** | 341.2 | 1579.8 | 785.7 | 1362.1 | 900 | 1413.4 | 1008.9 | 1845.4 | 1010 | 2327.3 | 1256.7 | 2676.8 |
| % | 32.8 | 42.1 | 52.9 | 42.0 | 50.2 | 43.2 | 45.1 | 45.0 | 41.9 | 46.8 | 47.4 | 48.3 |
| **Ընդամենը** | 1041.1 | 3748.9 | 1485.3 | 3239.3 | 1791.7 | 3273.4 | 2237.8 | 4097 | 2412.4 | 4975.5 | 2648.6 | 5537.5 |
| % | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 |
| **Արտաքին առևտրաշրջ.-ն*** | **4790 (100)** | | **4724.6 (98,6)** | | **5065.2 (107,2)** | | **6334.8 (125,1)** | | **7387.9 (116,6)** | | **8186.2 (110,8)** | |
| **Առևտրային հաշվեկշիռ**** | **-2771.5** | | **-1753.9** | | **-1481.7** | | **-1943.9** | | **-2551.1** | | **-2873.5** | |

* Փակագծերում արտաքին առևտրաշրջանառության աճի տեմպերը, %-ով:

** Ներմուծումը ներկայացված է ՖՕԲ գներով:

Աղբյուր: Աղյուսակում առկա տվյալները https://www.armstat.am/am/?nid=586 հղումով:

*Գծապատկեր 1. Արտաքին առևտրաշրջանառության բաղադրիչների և ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշների դինամիկան (%)*




Այսպես, արտաքին առևտրաշրջանառություն/ՀՆԱ հարաբերակցության մակարդակը 2010թ.-ից սկսած աճելով 8.2 տոկոսային կետով 2019թ.-ին կազմել է 59.9%, արտահանում/ՀՆԱ հարաբերակցության մակարդակը համապատասխանաբար աճել է 8.25 տոկոսային կետով 2019թ.-ին կազմել 19.4%, իսկ ներմուծում/ՀՆԱ հարաբերակցության մակարդակը 2010թ.-ին և 2019թթ.-ին կազմել է 40.5%, բայց նշված ժամանակաշրջանի ընթացքում սկզբում նվազել, իսկ հետո աճել: Արտաքին առևտրաշրջանառության հարաբերական ցուցանիշների մակարդակների աճը պայմանավորված է առևտրաշրջանառության աճի առաջանցիկ տեմպերով: Մասնավորապես դիտարկվող ժամանակաշրջանում ՀՆԱ-ի միջին տարեկան հավելաճի տեմպը կազմել է 92.8%, արտաքին առևտրաշրջանառության՝ 96.6%, իսկ արտահանման և ներմուծման ծավալներն համապատասխանաբար՝ 104.4% և 92.9%: Աղյուսակ 1-ի տվյալներից երևում է, որ Հայաստանի առևտրային հաշվեկշռի բացասական հաշվեմնացորդը 2010-2015թթ.-երի ընթացքում ունեցել է նվազման միտում, իսկ 2015-2019թթ.երի ընթացքում այն նորից աճել է: Նվազագույն մակարդակը գրանցվել է 2016թ.-ին, երբ բացասական հաշվեմնացորդը կազմել 1481.7 մլն դոլար, իսկ 2019թ.-ին արտահանման և ներմուծման տարբերությունն արդեն կազմում է 287.5 մլն. դոլար:

Ժամանակակից իրականության կարևորագույն գծերից մեկը տարբեր երկրների տնտեսությունների փոխադարձ կախվածության աճն է, ինտեգրացիոն գործընթացների զարգացումը, զարգացած երկրների անցումը ներփակ ազգային տնտեսություններից բաց տնտեսության: Աստիճանաբար ձևավորվում և սերտանում են տարածաշրջանային տնտեսական կապերը ներառելով բազմաթիվ երկրներ: Միջազգային

տնտեսական ինտեգրացիան ստանում է գործնական կիրառություն[a] սահմանելով հետագա զարգացման հեռանկարները:

Դիտարկվող ժամանակաշրջանում ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը և կառուցվածքն ըստ երկրների բավականին տեղաշարժեր է կրել: Այդ ցուցանիշը ԱՊՀ երկրների հետ 2010թ.-ի համեմատ 2019թ.-ին ավելացել է 1175.4 մլն. դոլարով կամ 1.9 անգամ և կազմել է 2516.4 մլն դոլար, կամ ամբողջ առևտրաշրջանառության 30.7%-ը: Աճը պայմանավորված է եղել արտահանման ծավալների առաջանցիկ աճով, որը կազմել է շուրջ 4 անգամ, իսկ ներմուծման ծավալներն ավելացել են 1.5 անգամ: Ինչպես ԱՊՀ, այնպես էլ ամբողջ աշխարհի երկրների մեջ ամենաակտիվ գործընկերը հանդիսանում է ՌԴ-ը, որի հետ արտաքին առևտրաշրջանառության մասնաբաժինը 2019թ.-ին 2010թ.-ի համեմատ ավելացել է 6.5 տոկոսային կետով և 2019թ.-ին կազմել է 27.3%, ինչը հիմնականում պայմանավորված է ներմուծման և ատահանման ծավալների համապատասխանաբար 1.8 և 4.6 անգամ աճով: ԱՊՀ հաջորդ երկիրը, որի հետ Հայաստանի առևտրաշրջանառության և դրա առանձին բաղադրիչների ծավալները համեմատաբար մեծ են, Ուկրաինան է (տե՛ս աղյուսակ 1): Իսկ ինչ վերաբերվում է ԵՄ և մյուս երկրների հետ արտաքին առևտրաշրջանառության ծավալներին, ապա այստեղ չնայած բացարձակ արտահայտությամբ 2019թ.-ին 2010թ.-ի համեմատությամբ էական փոփոխություն տեղի չի ունեցել, սակայն հարաբերական արտահայտությամբ արձանագրվել է նվազում: Մանավորապես ԵՄ երկրների արտաքին առևտրաշրջանառության մասնաբաժինը դիտարկվող ժամանակաշրջանում նվազել է 10.7 տոկոսային կետով և 2019թ.-ին կազմել է 21.2% կամ 1736.2 մլն դոլար: ԵՄ երկրների հետ արտահանման ծավալները ընդհանուր ծավալում հարաբերական արտահայտությամբ նվազել են 26.1 տոկոսային կետով և կազմել է ամբողջ արտահանման 22%-ը, իսկ բացարձակ արտահայտությամբ աճել է 82.1 մլն դոլարով, իսկ ներմուծման ծավալները ընդհանուր ծավալում հարաբերական արտահայտությամբ նվազել են 6.6 տոկոսային կետով և կազմել է ամբողջ ներմուծման 20.8%-ը, իսկ բացարձակ արտահայտությամբ աճել է 126.1 մլն դոլարով:

Եթե մինչև 2010թ.-ը ՀՀ արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքը վկայում էր դեպի եվրոպական երկրներ ուղղվածության կայուն միտում ունենալու մասին, ապա դրանից հետո ՀՀ առևտրի ուղղվածությունը փոխվել է դեպի ԱՊՀ երկրներ, որի աճը պայմանավորված է նաև Հայաստանի ԵԱՏՄ անդամակցությամբ (օրինակ՝

2019թ.-ին ՌԴ հետ արևտրաշրջանառությունը կազմում է ԱՊՀ երկրների ընդհանուր առևտրաշրջանառության 88.7%-ը, արտահանումը՝ 91.8%-ը, իսկ ներմուծումը՝ 87.3%-ը, տե՛ս աղյուսակ 1):

*Աղյուսակ 2. Հիմնական գործընկեր-երկրների տեսակարար կշիռները ՀՀ արտահանման և ներմուծման մեջ*

| Արտահանում | | | | | Ներմուծում | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Երկրներ | 2010 | | 2019 | | Երկրներ | 2010 | | 2019 | |
| | % | hh | % | hh | | % | hh | % | hh |
| Ռուսաստանի Դաշնություն | 15.4 | 1 | 28.0 | 1 | Ռուսաստանի Դաշնություն | 22.3 | 1 | 26.9 | 1 |
| Շվեյցարիա | 1.6 | 11 | 17.3 | 2 | Չինաստան | 10.8 | 2 | 13.6 | 2 |
| Բուլղարիա | 15.0 | 2 | 7.8 | 3 | Գերմանիա | 5.6 | 4 | 6.9 | 3 |
| Չինաստան | 3.0 | 9 | 7.3 | 4 | Իրան | 5.3 | 6 | 5.9 | 4 |
| Իրաք | - | - | 6.7 | 5 | ԱՄՆ | 3.0 | 9 | 5.1 | 5 |
| Նիդերլանդներ | 9.5 | 4 | 5.8 | 6 | Թուրքիա | 5.6 | 5 | 4.8 | 6 |
| Իրան | 8.1 | 5 | 3.2 | 7 | Ճապոնիա | 2.2 | 11 | 3.8 | 7 |
| Գերմանիա | 12.7 | 3 | 2.6 | 8 | Իտալիա | 3.3 | 7 | 3.7 | 8 |
| Վրաստան | 4.7 | 8 | 2.6 | 9 | Ուկրաինա | 6.1 | 3 | 2.6 | 9 |
| Կանադա | 2.8 | 10 | 2.3 | 10 | Հնդկաստան | 1.2 | 20 | 2.3 | 10 |
| Իտալիա | 0.5 | 20 | 2.3 | 11 | Ֆրանսիա | 2.0 | 12 | 1.5 | 11 |
| ԱՄԷ | 0.8 | 15 | 2.2 | 12 | Վրաստան | 1.4 | 17 | 1.4 | 12 |
| Սիրիա | - | - | 2.1 | 13 | Միացյալ Թագավորություն | 1.0 | 22 | 1.4 | 13 |
| ԱՄՆ | 7.9 | 6 | 2.0 | 14 | Բրազիլիա | 1.4 | 18 | 1.2 | 14 |
| Բելգիա | 7.0 | 7 | 1.7 | 15 | Վիետնամ | | | 1.1 | 15 |
| Ուկրաինա | 1.2 | 13 | 0.9 | 16 | Կորեայի Հանրապետություն | 1.9 | 13 | 1.0 | 16 |
| Բելառուս | 0.4 | 22 | 0.7 | 17 | Շվեյցարիա | 1.9 | 15 | 1.0 | 17 |
| Լեհաստան | 0.2 | 29 | 0.5 | 18 | ԱՄԷ | 1.0 | 23 | 0.9 | 18 |
| Ֆրանսիա | 0.7 | 16 | 0.3 | 19 | Բելառուս | 0.9 | 24 | 0.9 | 19 |
| Իսրայել | 0.4 | 24 | 0.3 | 20 | Բելգիա | 1.9 | 14 | 0.8 | 20 |
| Այլ երկրներ | 2.4 | - | 0.7 | - | Այլ երկրներ | 3.9 | - | 2.9 | - |

*Աղյուսակ 3. Որոշ ապրանքների արտահանման ծավալների դինամիկան (մլն. դոլար) և կառուցվածքը(%)*

| | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներներ | 109.3 | 146.8 | 186.5 | 213 | 189.2 | 125.2 | 176 | 241.9 | 229.7 | 293.1 |
| % | 10.5 | 11.0 | 13.5 | 14.4 | 12.2 | 8.4 | 9.8 | 10.8 | 9.5 | 11.1 |
| Ծխախոտ | 8.3 | 16.3 | 41.9 | 69.1 | 116.6 | 171.1 | 205.6 | 237.8 | 267.6 | 290.5 |
| % | 0.8 | 1.2 | 3.0 | 4.7 | 7.5 | 11.5 | 11.7 | 10.6 | 11.1 | 11.0 |
| Հանքաքար | 230.1 | 286.9 | 279.3 | 303.2 | 291.2 | 366 | 400.5 | 598.7 | 557.1 | 665.1 |
| % | 22.1 | 21.5 | 20.2 | 20.5 | 18.8 | 24.6 | 22.4 | 26.8 | 23.1 | 25.1 |
| Ալյումին | 83.3 | 90.7 | 88 | 85.5 | 93.3 | 86.4 | 84.9 | 101.9 | 96.1 | 99.6 |
| % | 8.0 | 6.8 | 6.4 | 5.8 | 6.0 | 5.8 | 4.7 | 4.6 | 4.0 | 3.8 |
| Տեքստիլ հագուստ | 3.3 | 5.6 | 15 | 33.3 | 47 | 61.4 | 76.7 | 95.9 | 157.5 | 124.2 |
| % | 0.3 | 0.4 | 1.1 | 2.3 | 3.0 | 4.1 | 4.3 | 4.3 | 6.5 | 4.7 |
| Սև մետաղներ | 145.7 | 150.8 | 118.7 | 105.1 | 110.1 | 55.6 | 62.3 | 84.7 | 126.5 | 149.7 |
| % | 14 | 11.3 | 8.6 | 7.1 | 7.1 | 3.7 | 3.5 | 3.8 | 5.2 | 5.7 |
| Թանկարժեք քարեր | 134.3 | 196.1 | 173 | 188.1 | 230.3 | 194 | 336.9 | 291 | 307.4 | 414.8 |
| % | 12.9 | 14.7 | 12.5 | 12.7 | 15 | 13.1 | 18.8 | 13.0 | 12.7 | 15.7 |
| Այլ | 326.8 | 441.1 | 477.8 | 481.4 | 469.6 | 425.6 | 448.8 | 585.8 | 670.5 | 611.6 |
| % | 31.4 | 33.1 | 34.6 | 32.6 | 30.3 | 28.7 | 25.0 | 26.2 | 27.8 | 23.1 |
| **Ընդամենը** | **1041.1** | **1334.3** | **1380.2** | **1478.7** | **1547.3** | **1485.3** | **1791.7** | **2237.7** | **2412.4** | **2648.6** |
| **%** | **100,0** | **100,0** | **100,0** | **100,0** | **100,0** | **100,0** | **100,0** | **100,0** | **100,0** | **100,0** |

*Աղբյուր. Աղյուսակում առկա տվյալները https://www.armstat.am/am/?nid=586 հղումով:*

Դիտարկվող ժամանակահատվածում հանրապետության արտահանման և ներմուծման մեջ հիմնական գործընկեր-երկրների տեսակարար կշիռները նույնպես տատանվել են (տե՛ս աղյուսակ 2):

Ցանկացած երկրի արտահանում-ներմուծում հարաբերակցության դիտարկումը պարզ պատկերացում է տալիս, թե տվյալ երկիրն արտահանման ինչ ներուժ ունի, տնտեսության որ ճյուղերն են զարգացած և մեծածավալ արտադրանք տալիս, և ինչի կարիք ունի, որ ստիպված է ներկրել: Այս տեսանկյունից Հայաստանի պարագայում ունենք բավականին հետաքրքիր պատկեր:

Այսպես, 2010-2019թթ. հանրապետությունից արտահանված ապրանքների կառուցվածքի կեսից ավելին (65.4-76.9%) բաժին է ընկել ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ, թանկարժեք մետաղներ(ադամանդ, մարգարիտ, ոսկի, արծաթ և այլն) ոչ թանկարժեք մետաղներ (պղինձ, ալյումին, սև մետաղներ) հանքաքար (պղնձի, մոլիբդենի, ցինկի և այլնի հանքաքար) և տեքստիլ հագուստ ապրանքային խմբերին: Սակայն, դիտարկվող ժամանակաշրջանում, այս ապրանքախմբերի կառուցվածքային համամասնություններում տեղի են ունեցել էական տեղաշարժեր: Մասնավորապես, 2010-2019թթ.-ին արտահանման կառուցվածքում ամենամեծ մասնաբաժինն ունեցել է հանքաքար ապրանքային խումբը, որի մասնաբաժինը արտահանման կառուցվածքում տարբեր տարիներին տատանվել է 18.8 - 26.8 տոկոսային միջակայքում: Մասնավորապես, 2019թ.-ին համեմատ 2010թ.-ին հանքաքարային ապրանքային խմբի արտահանման ծավալները ավելացել են 3 տոկոսային կետով և կազմել է արտահանման 25.1%-ը կամ 665.1 մլն. դոլար:

Պղինձը կրկին առաջատարն է Հայաստանի արտահանման կազմում: Մաքսային ծառայության հրապարակած տվյալները ցույց են տալիս, որ 2019թ.-ին Հայաստանից ամենաշատն արտահանվել է պղինձ (627 մլն ԱՄՆ դոլար), ծխախոտ (273 մլն դոլար) ու կոնյակ (253 մլն դոլար): 2019թ.-ին Հայաստանից արտահանվել է 562 հազար տոննա պղնձի խտանյութ: Վերջին տասը տարիների կտրվածքով սա ամենաբարձր ցուցանիշն է: 2013-2019թթ.-երին հանրապետության արտահանման ծավալներում և ապրանքային կառուցվածքում արձանագրվել են տատանումներ և կառուցվածքային համամասնությունների փոփոխություններ: 2019թ.-ին Հայաստանից արտահանվել է 562 հազար տոննա պղնձի խտանյութ՝ հանքաքար և խտահանք, որի մասքային արժեքը կազմել է մոտ 627 մլն դոլար: 2018թ.-ի համեմատ արտահանված պղնձի քանակն աճել է 137 հազար տոննայով կամ 32%-ով,

իսկ արժեքը՝ 101 մլն դոլարով կամ 19%-ով: Ստացվում է, որ արտահանվող պղնձի քանակն ավելի մեծ տեմպերով է աճել, քան արժեքը: Սա նշանակում է, որ նախորդ տարի արտահանված պղնձի միջին գինն ավելի ցածր է եղել, քան 2018թ.-ին: Մասնավորապես, եթե 2018թ.-ին պղնձի մեկ տոննան արատահանվել է միջինը 1237 դոլարով, ապա՝ 2019թ.-ին՝ 1115 դոլարով:

*Գծապատկեր 2. Պղնձի խտանյութի արտահանման ծավալները 2010-2019թթ.-երի ընթացքում (մլն. դոլար)*




Ինչպես ցույց են տալիս Վիճակագրական կոմիտեի (ՀՀ ՎԿ) տվյալները, 2019թ.-ին Հայաստանում արտադրվել է 400 հազար տոննա պղնձի խտանյութ: 2018թ.-ի համեմատ այն ավելացել է 26%-ով: 28.9%-ով էլ աճել է մոլիբդենի խտանյութի արտադրությունը՝ կազմելով 11.1 հազար տոննա: Արդյունքում մոլիբդենի արտահանումը ևս ավելացել է. 2019թ.-ին այն կազմել է 8.9 հազար տոննա՝ 2018թ.-ի 7.1 հազար տոննայի դիմաց:

Հայաստանից արտահանվող ապրանքների հիմնական սպառման ուղղությունը 2018թ.-ի համեմատ փոքր-ինչ փոփոխությունների է ենթարկվել: Եթե 2018-ին հիմնական ուղղություններ համարվող ԵԱՏՄ-ին ու ԵՄ-ին բաժին էր հասնում հայաստանյան արտադրանքի համապատասխանաբար 28.5 և 28.3%-ը, ապա նախորդ տարի ԵՄ-ի մասնաբաժինը նվազել է 6.2%-ով:

Դիտարկվող ժամանակաշրջանում հանրապետության ներմուծման ծավալների դինամիկայում և կառուցվածքում նույնպես արձանագրվել են տատանումներ և տեղաշարժեր:

*Գծապատկեր 3. ՀՀ արտահանման աշխարհագրությունը 2019թ.*




Ի տարբերություն արտահանման կառուցվածքի, որի 60-ից 70%-ը ապահովվել են ծխախոտի, ոգելից և ոչ ոգելից ըմպելիքների, պղինձի, ալյումինի, սև մետաղների, ադամանդի և հանքաքարերի (պղինձի և մոլիբդենի խտանյութեր) ծավալները, ներմուծման պարագայում ապրանքային կառուցվածքը համեմատաբար շերտավորված (դիֆերենցված) է, քանի որ ներմուծման ապրանքային կառուցվածքի մինչև 50 տոկսոը, ապահովվել է մի քանի ապրանքների և ապրանքային խմբերի ներմուծման ծավալների հաշվին (տե՛ս աղյուսակ 4):

2015-2019թթ. հանքային վառելանյութ ապրանքային խմբի ներմուծման ծավալները բացարձակ արտահատությամբ էական փոփոխությունների չեն ենթարկվել, իսկ հարաբերական արտահայտությամբ՝ նվազել են: Այսպես, 2010թ.-ին այդ ապրանքախմբի մասնաբաժինը ընդհանուր ներմուծման մեջ կազմել է 17.3% կամ 648.8 մլն. դոլար և ավելանալով 2019թ.ին կազմել 765.5 մլն. դոլարով կամ իսկ հարաբերական մեծությամբ ընդհանուր ծավալում նվազել են 4.5 տոկոսային կետով, իսկ դիտարկվող ժամանակաշրջանում ամենամեծ աճը գրանցվել է 2012թ.-ին՝ 902.5 մլն դոլար կամ 21.2%: Մինչ դեռ 2014-2019թթ. ընթաքում 2011-2014թթ.-երի նկատմամբ այդ ապրանքախմբի ներմուծման ծավալները բացարձակ և հարաբերական արտահայտությամբ նվազել են (տե՛ս աղյուսակ 4): Ներմուծման ապրանքային կառուցվածքում՝ միջուկային ռեակտորներ ապրանքային խմբի մասնաբաժինն է:

*Աղյուսակ 4. Որոշ ապրանքների ներմուծման ծավալների դինամիկան (մլն. դոլար) և կառուցվածքը(%)*

| | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ծխախոտ** | 80.2 | 74.8 | 74.4 | 107 | 82.1 | 82.3 | 101.3 | 74.2 | 130.4 | 149.5 |
| % | 2.1 | 1.8 | 1.7 | 2.4 | 1.9 | 2.5 | 3.1 | 1.8 | 2.6 | 2.7 |
| **Հանքային վառելանյութ** | 648.8 | 806.1 | 902.5 | 857.9 | 842.7 | 624.9 | 568.6 | 626.7 | 677.9 | 765.5 |
| % | 17.3 | 19.4 | 21.2 | 19.6 | 19.0 | 19.3 | 17.4 | 15.3 | 13.6 | 13.8 |
| **Դեղագործական մթերք** | 91.9 | 110.2 | 110.6 | 127.8 | 118.5 | 111.2 | 115.9 | 184.7 | 158.6 | 209.6 |
| % | 2.5 | 2.7 | 2.6 | 2.9 | 2.7 | 3.4 | 3.5 | 4.5 | 3.2 | 3.8 |
| **Պլաստմասսա** | 109.6 | 126.7 | 119.4 | 123.6 | 129 | 97.8 | 91.1 | 112.3 | 142.6 | 148.5 |
| % | 2.9 | 3.1 | 2.8 | 2.8 | 2.9 | 3.0 | 2.8 | 2.7 | 2.9 | 2.7 |
| **Թանկարժեք քարեր** | 158.9 | 214.9 | 179.1 | 295.3 | 302.9 | 118.1 | 161.5 | 233.4 | 288.3 | 299.9 |
| % | 4.2 | 5.2 | 4.2 | 6.7 | 6.8 | 3.6 | 4.9 | 5.7 | 5.8 | 5.4 |
| **Միջուկային ռեակտորներ** | 359.5 | 334.9 | 386.3 | 409.5 | 397.4 | 267.9 | 249.5 | 372.2 | 567.6 | 491.9 |
| % | 9.6 | 8.1 | 9.1 | 9.3 | 9.0 | 8.3 | 7.6 | 9.1 | 11.4 | 8.9 |
| **Էլեկտրական մեքենաներ** | 292.3 | 231.6 | 215.6 | 171.7 | 200.9 | 146 | 219.2 | 256.3 | 367.3 | 373 |
| % | 7.8 | 5.6 | 5.1 | 3.9 | 4.5 | 4.5 | 6.7 | 6.3 | 7.4 | 6.7 |
| **Վերգետնյա տրանսպորտ** | 246.6 | 312.9 | 340.6 | 336.6 | 345.9 | 188.1 | 159.2 | 244.2 | 344.4 | 747.7 |
| % | 6.6 | 7.5 | 8.0 | 7.7 | 7.8 | 5.8 | 4.9 | 6.0 | 6.9 | 13.5 |
| **Այլ** | 1761.2 | 1933.2 | 1932.7 | 1956.5 | 2005 | 1602.9 | 1607.2 | 1993.1 | 2298.4 | 2352 |
| % | 47.0 | 46.6 | 45.4 | 44.6 | 45.3 | 49.5 | 49.1 | 48.6 | 46.2 | 42.5 |
| **Ընդամենը** | 3749 | 4145.3 | 4261.2 | 4385.9 | 4424.4 | 3239.2 | 3273.5 | 4097.1 | 4975.5 | 5537.6 |
| % | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 | 100,0 |

*Աղբյուր. Աղյուսակում առկա տվյալները https://www.armstat.am/am/?nid=586 հղումով:*

Ընդ որում միջուկային ռեակտորների ներմուծման ծավալները մեջ որոշակի չափով տատանվել են և դիտարկվող ժամանակաշրջանում տատանվել են 8.1-11.4 տոկոսային միջակայքում: 2018թ.-ին հանրապետություն է ներմուծվել 5676.6 միլիոն դոլար միջուկային ռեակտոր և սարքավորումներ:

Ապրանքների ներմուծման և արտահանման դինամիկայի և ապրանքային կառուցվաքի վերլուծությունն առավել ամբողջական դարձնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել դրանց աշխարհագրական ուղղվածությունը: Վերլուծության արդյունքում պարզվեց, որ մեր կողմից առանձնացված այն ապրանքախմբերը և ապրանքները որոնք ներմուծվել և արտահանվել են մեծ ծավալներով, ըստ աշխարհագրական ուղղվածության խիստ կենտրոնացված են:

Հաշվի առնելով այն փաստը, որ տնտեսական աճի՝ ՀՆԱ-ի աճի և տնտեսական ակտիվության ցուցանիշի աճի տեմպերը գրեթե նույնն են լինում, կարելի է արդեն ենթադրել, որ տնտեսական աճը 2019թ.-ի տվյալներով 7.5-8%-ի սահմաններում է լինելու: Հիշեցնենք, որ ՀՆԱ-ի աճն ու ՏԱՑ-ի աճը տարբեր ցուցանիշներ են, սակայն սովորաբար դրանք մոտ են լինում և երկուսն էլ արտահայտում են երկրի տնտեսության աճի տեմպերը: Ասելով տնտեսական աճ՝ հիմք ենք ընդունում ՀՆԱ-ի աճը, որի 2019թ.-ի տվյալներով, ամենայն հավանականությամբ, կհրապարակվի այս տարվա փետրվարի վերջում: Վիճակագրական կոմիտեի տվյալները ցույց են տալիս, որ վերջին տարիների կտրվածքով տնտեսական ակտիվության ցուցանիշը ամենաբարձր աճը 2019թ.-ին է: 2012 և 2017թթ.-ներին աճը մոտ է այս մակարդակին: Իսկ ամենացածր ցուցանիշը գրանցվել է 2016թ.-ին:

*Գծապատկեր 4. ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշները 2010-2019թթ.-երի ընթացքում (%)*



Չնայած այն փաստին, որ Հայաստանն արդեն 5 տարի համարվում է ԵԱՏՄ անդամ, և սպասվում էր ապրանքաշրջանառության ծավալների աճ հենց այս տնտեսական միության անդամ երկրների հետ, սակայն նախորդ տարվա ընթացքում ԵՄ երկրներ արտահանվող ապրանքների կրճատումը բերեց ոչ թե ԵԱՏՄ անդամ երկրների հետ ապրանքաշրջանառության աճի, այլ արտահանման ուղղությունը փոխվեց դեպի ԵԱՏՄ և ԵՄ անդամ չհանդիսացող երկրներ: 2018-ին այս երկրներ արտահանվող ապրանքները կազմում էին ընդհանուրի 41.8%-ը, իսկ արդեն նախորդ տարի այս ցուցանիշն ավելացավ 5.7%-ով՝ դառնալով 47.6%: Մեր կարծիքով՝ ՀՀ-ն, հանդիսանալով որպես ԵԱՏՄ անդամ, ներմուծման և արտահանման ամենամեծ բաժինը պատկանում է ՌԴ-ին և մեծ կախվածության մեջ է գտնվում վերջինից: Դա ունի ինչպես իր դրական, այնպես էլ բացասական կողմերը: Դրական կողմն այն է, որ ՀՀ-ի համար ՌԴն հանդիսանում է արտահանման հիմնական աշխարհագրական ուղղություններից մեկը և ԵԱՏՄ մյուս երկրների հետ մեր երկիրը չունի այսպիսի մեծ ծավալների հասնող առևտրաշրջանառություն: Բացասական կողմն այն է, որ ներմուծումը տեղի է ունենում ռումբլիով, որի այնքան կայուն արժույթ չէ և այն հանդիսանում է մեր տնտեսության զարգացման խոչընդոտներից մեկը: Մեր կարծիքով ՀՀ-ն պետք է փորձի ընդլայնել ներմուծման աշխարհագրությունը, որը կնպաստի առևտրի տեսանկյունից որոշակի չափով կայունության ապահովմանը: Այս վիճակը վկայում է այն մասին, որ ՀՀ-ն ամբողջովին չի ինտեգրվել ԵԱՏՄ-ին մյուս երկրների հետ պասիվ առևտրաշրջանառության պատճառով: Բացի այդ, երրորդ երկրների հետ ավելի բարձր մաքսային տուրքերով առևտուրը բերելու է շուկայական գների բարձրացման (այս երևույթը տեղին կլիներ ազգային արտադրողներին խթանելու տեսանկյունից): Հայաստանում այն կհանգեցնի ինֆլյացիայի աճի, քանի որ ՀՆԱ-ում ներմուծումը մեծ մաս ունի (Симонян, 2017):

2019թ.-ին 2010թ.-ի ընթացքում արտահանման ծավալները և առևտրաշրջանառությունը 2 անգամ աճել են, ինչը դրական գործոն է հանդիսանում տնտեսության զարգացման համար: Բայց, ուշադրություն դարձնելով այս երկու ցուցանիշների կառուցվածքին, նկատում ենք, որ այն տեղի է ունեցել հումքի և կիսաֆաբրիկատ ապրանքների արտահանմանը, ինչը մեր կարծիքով էական ազդեցություն չի թողնում ՀՀ տնտեսության հետագա զարգացման և նոր հետագա ներդրումների իրականացման վրա: Մեր կարծիքով ՀՀ-ն պետք է գոնե այս ապրանքների մակարդակով ապահովի լրիվ արտադրական ցիկլով

արտադրություն, ինչը կնպաստի առևտրաշրջանառության աճի և կլուծի մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրներ(այն է նոր աշխատատեղերի ստեղծում):

Covid-19-ը և 2020թ.-ին տեղի ունեցած 44-օրյա պատերազմը տնտեսական և սոցիալական մեծ խնդիրների առաջ կանգնեցրեցին մեր երկրին: Հայաստանում ևս կրճատվեց ապրանքաշրջանառությունը և որ ամենակարևորն է ՀՀ-ն ունեցավ մեծ մարդկային և տնտեսական ռեսուրսների կորուստ: Հիմնական խոչընդոտներից մեկն էլ հանդիսանում է տրանսպորտային շրջափակումը: 2021թ.-ին՝ պատերազմի ավարտից հետո, քայլեր պետք է ձեռնարկվեն այդ շրջափակման վերացման ուղղությամբ և արդեն իսկ այն գտնվում է ընթացքի մեջ: Դրա իրագործումը, մեր կարծիքով, կարող է նոր հեռանկարներ բացել դեպի ասիական երկրներ առևտրային հարաբերությունների զարգացման համար: Իհարկե այպիսի նախագծերի իրականացման համար անհրաժեշտ է նախապատրաստվել և կատարել մեծ ֆինանսական ներդրումներ, իսկ Ասիայում այդպիսի մեծ ներդրող կարող է հանդիսանալ Չինաստանը, որն արդեն իսկ Իրանի հետ քննարկում են Իրանում այդպիսի տնտեսական կառուցվածքների ստեղծումը: Իրանը և Չինաստանը նորացրել են 25-ամյա գործարքը, որը ստորագրվել է 2016 թ.-ին առաջին անգամ, որը նախատեսում է 400 մլրդ չինական ներդրումներ ռեսուրսներով հարուստ մերձավորարևելյան երկրում, հաղորդում է The Petroleum Economist հեղինակավոր էներգետիկ պարբերականը[1]: Ուստի ՀՀ-ն նույնպես պետք է արագ կողմնորոշվի այս իրավիճակում և փորձի գտնել նոր գործընկերներ, իհարկե՝ հաշվի առնելով իր այդպիսի հարաբերությունները հետևանքները: Մենք պետք է փորձենք գտնել այն ոսկե միջինը, որը կօգնի մեզ հասնել տնտեսական ռեսուրսների և հնարավորությունների դիվերսիֆիկացման ու կնվազեցնի տնտեսության վրա ազդող բացասական գործոնների ազդեցությունը:

[1] https://www.presstv.com/Detail/2019/09/04/605301/Iran-China-investment-oil-gas-railway-US-Russia:

**Գրականություն**
**References** (with English translation and transliteration)


- Гоголева Т.Н. Мировая экономика. «Тенденции теоретического анализа»: Учебное пособие // Воронеж: Изд-во ВГУ, 2013, 167 с.
- Gogoleva T. N. World Economy. "Trends of theoretical analysis": Textbook // Voronezh: VSU Publishing House, 2013, 167 p.
- Дралин А. И., Михнева С. Г. «Внешнеэкономическая деятельность»: учебное пособие // Изд. 2-е, перераб. и доп. – Пенза: Информационноиздательский центр ПГУ, 2013, 127 с.
- Dralin A. I., Mikhneva S. G. "Foreign economic activity": textbook / / Ed. 2-e, pererab. and additional – Penza: Information and Publishing Center of PSU, 2013, 127 p.
- Сельцовский В. Л. «Экономико-статистические методы анализа внешней торговли» М.: Финансы и статистика, 2004. 512 с.
- Seltsovsky V. L. "Economic and statistical methods of analysis of foreign trade" M.: Finance and Statistics, 2004. 512 p.
- Симонян В.М., «Оценка эффективности торговой политики Республики Армения в контексте вступления в ЕАЭС», Вестник ПНИПУ. Социально-экономические науки, № 1 (2017), стр. 247-255
- Simonyan V. M., "Assessment of the effectiveness of the trade policy of the Republic of Armenia in the context of joining the EAEU", Bulletin of the PNRPU. Socio-Economic Sciences, No. 1 (2017), pp. 247-255
- https://www.armstat.am/am/?nid=12&id=01001&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC
- https://www.armstat.am/am/?nid=586
- https://hetq.am/hy/article/112716
- https://hetq.am/hy/article/114177
- https://hetq.am/hy/article/85461
- https://www.presstv.com/Detail/2019/09/04/605301/Iran-China-investment-oil-gas-railway-US-Russia
-


*Ընդունված է 1.12.2020*
*Գրախոսված է 29.1.2021*

# АНАЛИЗ ТОВАРООБОРОТА РА В 2010-2019ГГ.

*Мовсисян М.Э., Мартиросян Г.О.*

**Аннотация.** В статье обсуждаются объемы торгового оборота Республики Армения и занимаемая им позиция на международном рынке по объемам импорта и экспорта различных товарных групп в 2010-2019 гг. Изучен анализ эффективности внешнеторгового оборота, сравнение объемов экспорта и импорта как между собой, так и с объемом ВВП, выявление действующих между ними закономерностей и связи. Проблема, направленная на разработку более совершенных методов анализа внешней торговли – одна из тех, решение которой способствовало бы эффективному ее развитию. Поэтому первой задачей, которую необходимо решить при анализе внешнеторговых связей государства – это определить основные направления и этапы его проведения.

**Ключевые слова:** товарооборот, экспорт, импорт, экономическая активность показатели, товарные группы.

# THE ANALYSIS OF TRADE TURNOVER IN THE REPUBLIC OF ARMENIA DURING 2010-2019

*Movsisyan M.E., Martirosyan G.H.*

**Abstract.** The article discusses the volume of trade turnover of the Republic of Armenia and its position on the international market in terms of import and export volumes of various commodity groups in 2010-2019. The analysis of the efficiency of foreign trade turnover, comparison of the volumes of exports and imports both with each other and with the volume of GDP, identification of the laws and relations between them are studied. The task aimed at developing better methods for analyzing foreign trade turnover is one of those problems, the solution of which will contribute to its effective development. Therefore, the first task to be solved in the analysis of foreign trade relations of the state is to determine the main directions and stages of its implementation.

**Keywords:** trade turnover, export, import, economic activity indicators, product groups.